ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ. 2022Թ. 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿ

Սևան համայնքի ավագանու՝ ապրիլի 12-ի նիստում ներկայացվել է հաղորդագրություն Սևան համայնքի 2022 թվականի բյուջեի 1-ին եռամսյակի կատարողականի վերաբերյալ: Սևան համայնքի համար միավորված կարգավիճակով բյուջետային 1-ին հաշվետվությունն էր, որը միաժամանակ առկա խնդիրները, բնակավայրերի ֆինանսական հնարավորությունները վերանայելու, առաջիկա աշխատանքները կազմակերպելու հնարավորություն էր:

Համաձայն ներկայացված հաղորդագրության՝ Սևան միավորված համայնքի 2022թ. 1-ին եռամսյակի բյուջեի եկամուտների /վարչական և ֆոնդային բյուջեները միասին/ պլանը կատարվել է 89.5%-ով: 423.4 մլն. դրամ պլանային եկամուտների դիմաց հավաքագրած և պետական բյուջեից հատկացված դոտացիան կազմել է 379.2 մլն. դրամ, թերակատարումը կազմել է 44.3 մլն. դրամ, այդ թվում՝ վարչական բյուջեի գծով առկա է 19.5 մլն. դրամ եկամուտների թերակատարում, ֆոնդային բյուջեի գծով թերակատարումը կազմել է 79.1 մլն. դրամ է:

2022թ. 1-ին եռամսյակի բյուջեի վարչական մասը կատարվել 94.5 %-ով / պլան՝ 352.7 մլն. դրամ, փաստացի՝ 333.2 մլն. դրամ /: Վարչական բյուջեում սեփական եկամուտները կատարվել են 81.6 %-ով / պլան՝ 108.1 մլն. դրամ, փաստացի՝ 88.2մլն. դրամ /: Թերակատարումը կազմել է 19.9 մլն դրամ կամ 18.4 5 %: Հարկերի և տուրքերի պլան կատարվել է 79.9 %-ով: Հարկերի և տուրքերի մեջ գերակատարվել են անշարժ գույքի հարկի և տեղական տուրքերի եռամսյակային պլանները, իսկ մնացած եկամտատեսակերի գծով առկա է թերակատարում : Ոչ հարկային եկամուտների մեջ գերակատարվել են ինքնակամ կառույցների օրինականացման վճարները, ուսումնական, ծնողական վճարները, իսկ մնացած ոչ հարկային եկամուտների մասով առկա է թերակատարում:

2022թ. հունվարի 1-ին գործողության մեջ է դրվել անշարժ գույքի հարկը, որը միավորել է նախկին գույքահարկը և հողի հարկը, ինչպես նաև առանձնացվել է փոխադրամիջոցների հարկը ֆիզիկական և իրավաբանական անձանց գծով: Չնայած առկա բազմաթիվ անճշտություններին՝ ներդրված նոր ծրագրերն աշխատում են անխափան, զուգահեռ աշխատում են նաև գույքահարկերի նախկին ծրագրերը:

Սևան համայնքի բյուջեի 1-ին եռամսյակի թերակատարման պատճառն օբյեկտիվ է՝ չվճարումները պայմանավորված են առկա ժամանակաշրջանով:

Համայնքի ֆոնդային բյուջեի եկամուտները կատարվել են 42.4 %-ով / ճշտված պլան՝ 137.2 մլն. դրամ, փաստացի՝ 58.2մլն. դրամ /: 2022թ.-ի առաջին եռամսյակում ստացվել և ծախսվել է 2021թ. համար նախատեսված 20.6 մլն. դրամի սուբվենցիան:

Հիմք ընդունելով եկամուտների կատարման ցուցանիշները՝ համապատասխանաբար կատարվել են համայնքի 2022թ. 1-ին եռամսյակի բյուջեի ծախսերը: Համայնքի բյուջեի ծախսերը կատարվել են 95.0%-ով: 325.9 մլն. դրամ պլանային ծախսերի դիմաց փաստացի կատարվել է 309.7մլն. դրամի ծախս, կամ թերակատարումը կազմել է 16.2մլն. դրամ, կամ 5.0% :

Վարչական բյուջեի ծախսերը կատարվել են 94.3%-ով (պլան՝ 260.5մլն. դրամ, փաստացի՝ 245.6 մլն. դրամ), թերակատարումը կազմել է 14.9 մլն. դրամ: Վարչական բյուջեի փաստացի ծախսերի 41.6%-ը կամ 102.2մլն. դրամ կազմել են կրթության և մշակույթի ծախսերը, 99.2 մլն.դրամ՝ ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունները՝ 26.4մլն. դրամ՝ սանիտարական մաքրման ծախսեր:

Ըստ առանձին ոլորտների՝ համայնքի 2022թ. 1-ին եռամսյակի բյուջեի ծախսերը կատարվել են հետևյալ չափերով՝ կրթության ծախսերը՝ 91.7% , մշակույթի ծախսերը՝ 95.2%:

2022թ. համայնքի բյուջեի ֆոնդային մասի ծախսերը կատարվել են 97.2%-ով (պլան՝ 78.4մլն. դրամ, փաստացի ծախս՝ 76.2մլն. դրամ): Համայնքի 2022թ. ֆոնդային բյուջեից վճարվել է 53.6 մլն. դրամ ասֆալտապատման, փոսային հիմնանորոգման պարտքեր, այդ թվում՝ նաև 2021թ.-ի պարտքերը, 20.6 մլն. դրամը վճարվել է 2021թ.-ի սուբվենցիայի հաշվին:

2022թ. հունվարի 1-ի դրությամբ համայնքի պարտքերը կազմել են 34.7մլն. դրամ:

Բյուջետային գործառնություններից դուրս պարտքեր չկան: 2022թ.-ի առաջին եռամսյակի ընթացքում մարվել է 29.4 մլն. դրամ պարտք, այդ թվում՝ 25.1մլն. դրամ ճանապարհների հիմնանորոգման աշխատանքների մասով 2016թ-ից տեղափոխված պարտքեր:

2022թ. ապրիլի 1-ի դրությամբ միավորված համայնքի բյուջեի պարտքը հստակեցվում է. վերջնական տվյալներ չկան, քանի որ համայնքի միավորման գործընթացը դեռևս ավարտված չէ: Միաժամանակ ընթանում է գույքագրման գործընթաց. վարչական բնակավայրերից պարտքեր են տեղափոխվում համայնք, այդ թվում՝ ընթացիկ և կապիտալ բնույթի: